



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու, մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N-03-Ա.

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ <Հողային օրենսգրքի> 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով <Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց> փակ բաժնետիրական ընկերությանը հողամասեր օտարելու մասին ՀՀ կառավարության 20.01.2016թ. N 34-Ա որոշումը՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն համարվող, փողոց 16 թիվ 1 փոստային հասցեում գտնվող 0.008 հա հողամասը (ծածկագիրը 06-100-0119-0153, նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը կապի) ուղղակի վաճառքի ձևով օտարել <Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց> փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման ծրագրի իրականացման նպատակով:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով 11520 /տասնմեկ հազար հինգ հարյուր քսան/ ՀՀ դրամ:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԿԵՏՅԱՆ ՆԱԿԱՊԵՏ

2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ

3. ԴԱՎԹՅԱՆ ՁԵՎՈՐԳ

4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԵՏ

5. ՍԱՐԿՈՅԱՆ ՆՈՐԻԿ

6. ՄԱՌՅԱՆ ԶԱԿԵՆ

7. ՏՈՍԵՅԱՆ ՍՈՒԹԵՐ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N-04-Ա.

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՏ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարչապետ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները

Սարչապետի գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 7	Դեմ - 0	Ձեռնպահ - 0
1. ԱՎԵՏՅԱՆ ԱՆՇԱՊԵՏ		
2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓՈՒՐ		
3. ՂԱԿԱՅԱՆ ԿԵԿԻՐԳ		
4. ՂԱԿԱՅԱՆ ՀԱՄԼԵՏ		
5. ՄԱՐԴՈՅԱՆ ԱՐՓԵԿ		
6. ՄԱՐՈՅԱՆ ԶԱԿԵՆ		
7. ՏՈՍԵՅԱՆ ՍՈՒՍԵՐ		
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ		ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարչապետ համայնքի ավագանու
2016 թվականի փետրվարի 08-ի N – 04-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

- 1) Ռուդիկ Խալաթյան Մուշեղի 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ,
(Անուն, ազգանուն, հայրանուն)
- 2) Արևիկ Ավդալյան Եգորի 35 000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ,
(Անուն, ազգանուն, հայրանուն)

Ընդամենը՝ 75 000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:



Աշխատակազմի քարտուղար՝

Անժելա Մարտիրոսյան